ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ՝ 387 ԹԵ՞ 385

Պատմ. գիտ. թեկնածու Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Պատմագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել Հայաստանի բաժանման տարեթվի մասին՝ 384 թ., 387 թ., 389 թ.։ Հետազոտողներից ոմանք հատուկ զբաղվել են բաժանման տարեթվի հարցով, իսկ մյուսները առանց քննելու կրկնել են հայտնված կարծիքները։ Կ. Գյուտերբոկը և Հ. Աստուրյանը, փաստորեն, առաջիններն էին, որ հանգամանալից քննելով աղբյուրները, փորձել են ճշգրտել այդ թվականը։ Կ. Գյուտերբոկը հանգել է 387 թ.[1], իսկ Հ. Աստուրյանը՝ 384 թ.[2]։ Հետագայում Կ. Գյուտերբոկի կարծիքին (387 թ.) միացավ գիտնականների մեծամասնությունը։ Հ. Մանանդյանը, որը նորից է անդրադարձել այդ հարցի առնչությամբ հունա-հռոմեական աղբյուրներին, բերում է այն կովանները, որոնց վրա հենվում էր Կ. Գյուտերբոկը և եզրակացնում, որ նա իրավացի է[3]։

Կ. Գյուտերբոկի հիմնական կովանները են հունա-հռոմեական աղբյուրների հաղորդած տեղեկությունները 380-ական թթ. կայացած պարսկա-հռոմեական դեսպանությունների վերաբերյալ։ Հետազոտողը դրանք բերում է հետևյալ հաջորդականությամբ. Շապուհ III-ի գահակալության առթիվ Կոստանդնուպոլիս եղած դեսպանությունը՝ 384 թ.[4], «Թեոդոսի ութներորդ տարում»՝ 386 թ. դարձյալ կայսրություն ժամանած դեսպանությունը (որի ընթացքում, ինչպես ենթադրում է հետազոտողը, Հայաստանի մասին համաձայնության առաջարկություններ են եղել), հռոմեական դեսպանության ժամանումը և Ստիլիքոնի[5] միջնորդությամբ դաշինքի կնքումը՝ 387 թ. (ըստ հեղինակի «հաշտու-

---

1. K. Güterbock, Römisch-Armenien und die römischen Satrapien in 4 bis 6 Jahrhundert, Königsberg, 1900: Նույն աշխատության հայերեն թարգմանությունը տե՛ս Կ. Գյուտերբոկ, Հռոմեական Հայաստան և հռոմեական սատրապությունները Դ—Զ դարերում, թարգմանեց Նորշուան, Վիեննա, 1914, էջ 16—30։

2 Հ. Աստուրյան, Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռոմա, Վենետիկ—Ս. Ղազար, 1912, էջ 317—320։ Հմմտ. Մ. Օրմանյան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1913, § 172, էջ 247 և այլն։

3 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 233, 237։

4 Հ. Մանանդյանը նշում է, որ ենթադրվում է, թե այս դեսպանությունը նաև որոշ առաջարկներ է արել խաղաղություն կնքելու և Հայաստանի բաժանման մասին (նույն տեղում)։ Գիտնականը ամենայն հավանականությամբ նկատի ունի Հ. Աստուրյանի կարծիքը (նշվ. աշխ., էջ 318), որը պետք է ճիշտ լինի։

5 Կ. Գյուտերբոկը բերում է Ստիլիքոնի հյուպատոսության մասին բանաստեղծ Կլավդիոսի այն տողերը («Պատանի Լիբ եւ Ասորեստան հանդիսացար հեղինակ խաղաղութեան. այդպիսի վայրենի ազգի մը հետ դաշնադրութիւնը յանձնուեցաւ երիտասարդի»), որոնք նրա համար հիմք են ծառայել Հայաստանի բաժանումը դնելու 387 թ. (նշվ. աշխ., էջ 17)։ Նշվում է ևս մեկ պատգամավորություն՝ 389 թ., Վռամ IV Կրմանի ժամանակ (նույն տեղում, էջ 26—27։ Հ. Աստուրյան, նշվ. աշխ., էջ 319)։ Ինչպես նշվեց, կարծիք է հայտնվել նաև, որ բաժանումը տեղի է ունեցել 389 կամ 390 թթ. (Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, էջ 103։ J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 126)։

թյան ծախքերն ըրած պիտի ըլլա համենայն դեպս Հայաստան»)։ Թեև Կ. Գյուտերբոկը գրում է, որ «բաժանման դաշնագրության կնքումը նորագույն հետազոտությունների համաձայն՝ դրինք Թեոդոս Առաջնույն կառավարության ժամանակ, ճշտագույնս՝ 387-ին», այնուամենայնիվ նշում է, որ «այս ենթադրությունը սակայն կը կարոտի տակավին անդրագույն ապացույցի և արդարացման»։ Այնուհետև նա քննում է հայկական աղբյուրները և գալիս այն եզրակացության, որ դաշինքի կնքումը պետք է տեղի ունենար «ոչ 383-է հառաջ և ոչ 388-է ետքը»[6]։

Կ. Թումանովը փորձում է ի մի բերել գոյություն ունեցող կարծիքները, նշելով, որ ճիշտ է 387 թ. որպես բաժանման տարի ընդունելը։ Ընդ որում նա ժխտում է Ժ. Դուաղի տեսակետը (384 թ.)[7] և ընդունում է Ն. Բեյնեսի կարծիքը (387թ.)[8] որպես հարցի հիմք։

Ժ. Դուաղը իր տեսակետն ապացուցելու համար Ստիլիքոնի մասնակցությամբ կայացած դեսպանությունը դնում է 384 թ., նշելով նաև, որ Մանվել Մամիկոնյանի մահը (385 թ.) տեղի ունեցավ բաժանումից հետո։ Կ. Թումանովը գտնում է, որ Ժ. Դուաղը ճիշտ է, երբ Ստիլիքոնի մասնակցությամբ դեսպանության տարեթիվն ընդունում է 384 թ., սակայն, հակառակ Ժ. Դուաղի, նա պարտադիր չի համարում, որ այն համընկներ բաժանման տարեթվի հետ, եթե անգամ բանակցությունների ժամանակ, ինչպես ինքն է նշում, Հայաստանի բաժանման հարցը արծարծված լիներ[9]։

Նշենք, որ Ստիլիքոնի մասնակցությամբ դեսպանությունը, որը գլխավորում էր Սպորակիոսը, կայացել է, ինչպես նշված է գրականության մեջ, նույնիսկ ոչ թե 384 թ., այլ 383 թ.[10]։ Ինչպես տեսնում ենք, Ստիլիքոնի մասին եղած նյութը հիմք չի կարող ծառայել բաժանման տարեթիվը 387 թ. համարելու։ Ընդ որում, Ն. Բեյնեսը այս հարցի կապակցությամբ հետևում է Կ. Գյուտերբոկին։

Ուրեմն, եթե Կ. Թումանովը ճիշտ է համարում Դուաղին՝ Ստիլիքոնի կապակցությամբ, ապա նա դրանով Կ. Գյուտերբոկի տեսակետը զրկում է այն հիմքից, որի վրա, փաստորեն, հենվում է նաև Ն. Բեյնեսի՝ իր իսկ կողմից ընդունված կարծիքը։

---

6 Կ. Գյուտերբոկ, նշվ. աշխ., էջ 22, 26—27։

7 J. Doise, Le partage de l'Arménie sous Téodose Ier, „Revue des Études Anciennes" (Bordeaux), t. 47, № 3—4, 1915, էջ 274—277։ Ժ. Դուաղը ծանոթ չէ Հ. Աստուրյանի կարծիքին։

8 N. H. Baynes, Rome and Armenia in the IV century, „English Historical Revue", 25 (1910), էջ 624—643 (նույնը տե՛ս Byzantine Studies and Other Essays, London, 1955, էջ 186—208)։ Կ. Թումանովը վկայակոչում է նաև Ս. Տեր-Ներսեսյանի Armenia and the Byzantine Empire (Cambridge, 1947, էջ 6) աշխատությունը, որտեղ, սակայն, հարցը չի քննված։

9 C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, էջ 152, ծան. 6։

10 Տե՛ս Paulys Realencyclopadie die Classischen Altertumswissenschaft, München, 1929 (1972), IIIA₂, էջ 1875, 2523—2524 (այս հարցի կապակցությամբ որպես հիմնական գրականություն է նշված՝ R. Keller, Stilicho, Berlin, 1884; Seeck, Geschichte des Untergangs der antiken Welt V 69, 453)։ Այստեղ ասվում է, որ Ստիլիքոնը պետք է ծնված լիներ ոչ շուտ, քան 365 թ. (տե՛ս նաև W. Seyfarth, Romische Geschichte, Berlin, 1975, էջ 441), իսկ Կ. Գյուտերբոկը գրում է, որ 387 թ. նա 26 տարեկան էր (նշվ. աշխ., էջ 16)։

Կ. Գյուտերբոկը, որոշ չափով ծանոթ լինելով հայկական աղբյուրների հաղորդած տեղեկություններին, այնուհանդերձ, Մովսես Խորենացուն համարում է VII դարում կամ դրանից ուշ ապրած հեղինակ, նշելով, որ նրա գործը «ադամանահավատութենեն շատ բան տուժած է»[11]։ Ն. Բեյնեսը նույնպես գրում է, որ Խորենացու ժամանակագրությունը վստահություն չի ներշնչում[12]։ Այնինչ Խորենացու աշխատությունը հենց այն սկզբնաղբյուրն է, որը բաժանման տարեթիվը ճշտելու տեսանկյունից խիստ կարևոր է։ Բերենք Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու տեղեկությունները, որոնք լույս են սփռում բաժանման ժամանակի և պարագաների վրա։

Արշակ III-ի և նրա եղբոր՝ Վաղարշակի խնամակալ հայոց սպարապետ Մանվել Մամիկոնյանի մահից հետո, ինչպես նշում է Փավստոս Բուզանդը, նախարարներից շատերը գնացին Արշակունի ծագմամբ մեկ այլ թագավոր խնդրելու պարսից արքայից, որն ուրախությամբ հնազանդվում է, քանի որ մտածում էր «նովաւ յինքն գրաւել զաշխարհն Հայոց»։ Շապուհ III-ը (383—388 թթ.) Արշակունի տոհմից Խոսրովի (III) գլխին թագ է կապում, կին է տալիս իր քույր Զրուանդուխտին և իր զորքերի ու Զիկ դաստիարակի հետ ուղարկում է Հայաստան։ Այս տեսնելով Արշակ III-ը «մերժեցաւ տեղի եւ չոգաւ գնաց ի սահմանս Յունաց, և էին թիկունք Արշակայ՝ թագաւորն Յունաց (ձեռագրում՝ «թագաւորին Հայոց», ուղղումը Ք. Պատկանյանի) և Խոսրովու՝ թագաւորն Պարսից։ Ապա եկին զօրքն Յունաց թագաւորին ի թիկունս. և թագաւորն Արշակ զեկեղեաց գաւառաւ, և զօրքն Պարսից և արքայն Խոսրով յԱյրարատ գաւառին։ Ապա դեսպանք և հրեշտակք երկուց թագաւորացն, Յունացն և Պարսից, միմեանց առ միմեանս երթևեկէին։ Եւ այնուհետև առնէ խորհուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն Յունաց և թագաւորն Պարսից. և լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ թէ ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել և խանկտրել կարասցուք զայս թագաւորութիւնս. նախ ընդ երկու բաժանել երկու թագաւորօքս Արշակունեաց՝ զորս կացուցաք, ապա և ընդ նոսա կրծել ջանասցուք, աղքատացուցանել, ի մէջ արկանել ի ծառայութիւն, զի մի կարասցեն, ի մէջ մեր ամբառնալ զգլուխս։ Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին։ Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու, և բաժին մասինն Յունաց էր թագաւորին Արշակայ»[13]։

Փավստոսի այս ընդարձակ հաղորդումը մանրամասն ցույց է տալիս այն պարագաները, որոնցում ընթացավ Հայաստանի բաժանումը։ Շապուհ III-ը իր կողմից թագադրված Խոսրով III-ին Հայաստան ուղարկելը արդեն խոշոր քայլ էր համարում երկրի գրավման ուղղությամբ։ Սակայն, ինչպես երևում է, դեպքերն ավելի արագ ընթացան, քան սպասվում էր։ Կայսրը, թեկուզև կարճ ժամանակով, իր «հավանավորության» տակ է առնում Արշակ III-ին, որպեսզի Հայաստանի արևմտյան մասի կլանումը կայսրության կողմից, գոնե արտաքուստ, դրվի «օրինական» հիմունքների վրա։ Հայաստանի բաժանումը դեռևս

11 Կ. Գ յ ու տ ե ր բ ո կ, նշվ. աշխ., էջ 23։

12 N. B a y n e s, նշվ. աշխ., էջ 187, ծան. 3։ Գիտնականը նշում է, որ հայկական աղբյուրներից ինքն օգտագործել է միայն Փավստոսի գերմաներեն թարգմանությունը (նույն տեղում, էջ 186—187, ծան. 1)։

13 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 221—222։

թագավորական իշխանության վերացում չէր (այդ են վկայում Փավստոսի տողերը), այլ միասնական՝ Մեծ Հայքի թագավորության արոհումը երկու մասի՝ իրենց թագավորներով, կայսրության և Սասանյանների գերիշխանության տակ, որը վաղ ֆեոդալական ժամանակաշրջանում հանգեցնելու էր հայկական միասնական պետականության կորստին՝ արևելյան մասում մարզպանության, իսկ արևմտյան մասում կայսրական վարչական միավորների ստեղծումով։

Այսպիսով, Փավստոսի հաղորդումից չպետք է եզրակացնել, թե Խոսրովի Հայաստան ուղարկվելն էր բաժանման պատճառը։ Ընդհակառակը, ինչպես ստորև մանրամասն կերևա Փարպեցու և Խորենացու հաղորդումներից, Խոսրովի գալը և Արշակի՝ երկրի արևմտյան մասը հեռանալը պայմանավորված էին Մեծ Հայքի թագավորության բաժանումով՝ իսողություն, որի վավերացմանն էին կոչված Փավստոսի հիշատակած պարսկա-հռոմեական հերթական բանակցությունները։

Փարպեցին, հետևելով Փավստոսին, նույնպես խոսում է բաժանման մասին, ավելացնելով որոշ մանրամասնություններ։ Նա գրում է, որ Արշակի թագավորության ժամանակ «բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատատեցաւ յԵրկուս ծուէնս, ըստ օրինակի հնացեալ ձորձոյ։ ...Եւ ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունւոյն յերկուս, առ ի հնազանդեցուցանել զկողմն արևմտից աշխարհիս Հայոց՝ թագաւորին Յունաց ընդ իշխանութեամբ իւրոյ ազգութեանն, և զկողմն արևելից խոնարհեցուցանելով դառն և բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից՝ երթեալ այնուհետև նախարարքն Հայոց ի վիճակէ մասին արքային Պարսից՝ խնդրէին իւրեանց թագաւոր ըստ բնիկ նախնի կարգին յազգէն Արշակունեաց։ Եւ արքային Պարսից Շապհոյ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհէր նոցա թագաւոր Խոսրով անուն յազգէն Արշակունեաց։ Քանզի նախագոյն թագաւորն Հայոց Արշակ ունէր միահեծան զթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց։ Իբրև ետես, թէ խախտեալ քայքայեալ մատնեցաւ ի բաժանումն մեծ իշխանութիւն թագաւորութեան ազգին իւրեանց՝ մեծաւ տրտմութեամբ խռովեալ տարուկուսէր յանձն իւր. տեսանէր նախ զանկանելն ընդ լծով ծառայութեան երկուց թագաւորաց զաշխարհս Հայոց. և զարձեալ՝ զմեծ մասն, զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց ունել ի բաժին արքային Պարսից. քանզի թէպէտև հասեալ բազում գաւառք այլ ի ժառանգութիւն մասին թագաւորին Յունաց՝ սակայն համեմատէին այն միայն Այրարատեան գաւառին։ ...Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու... ազգն Արշակունեաց յաղագս անարժան գործոց իւրեանց, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ Ներսէսի՝ զտան եղեալք ընկեցիկք յերեսաց Աստուծոյ. մատնեցան ի բաժանումն թագաւորին Պարսից և Յունաց, որոց վիճակեալ երկոցունց զմեծ զաշխարհս Հայոց՝ բաժանեալ ծառայեցուցին։ Յաղագս որոյ յուղի անկեալ գնայր յԱյրարատեան գաւառէն որպէս ի գերութիւն Արշակ թագաւորն Հայոց. լաւ համարեցաւ երթալ զհետ սուղ սակաւ բաժնի յերկիրն հաւատացեալ, և կալ ի հնազանդութիւն Յունաց թագաւորին, բան թէ կալ ի փափուկ գաւառի այսպիսի վայելչութեանց, և տեսանել հանապազօր զայպանումն հաւատոց, զթշնամանս սուրբ եկեղեցւոյ, զնախատինս, զոր կրեալց էին պաշտօնեայք աստուածային ուխտին յանօրինաց մոգուցն, զթերեւութիւն իւրոյ ազգին և զթագաւորութեան՝ յամբարհաւաճ իշխանացն Պարսից տէրութեանն... Եւ խորհելով զայս ամենայն՝ յանկարծակի ի միտս իւր լքեալ

տարակուսեալ զբարի ժառանգութենէ զնախնեացն իւրոց՝ գնար ի ծառայութիւն թագաւորին Յունաց»[14]։

Փարպեցու հաղորդումից հետևում է, որ երկրի բաժանումով էր պայմանավորված Շապուհ III-ի կողմից Խոսրովին Հայաստան ուղարկելը[15]։ Ուրեմն իրոք, մինչև Խոսրովի Հայաստան գալը և Արշակի հեռանալը երկրի արևմտյան մասը, այսինքն այն ժամանակ, երբ վերջինս դեռևս ամբողջ երկրի թագավորն էր համարվում, բանակցություններ են եղել պարսից արքայի և կայսեր միջև, որոնց ժամանակ որոշվել է իրականացնել երկրի բաժանումը։

Խիստ կարևոր և հետաքրքիր են Մովսես Խորենացու մոտ այս կապակցությամբ եղած հաղորդումները, որոնց հիման վրա ճշգրիտ որոշվում է բաժանման տարեթիվը։ Նա գրում է. «Իմացեալ Շապհոյ, թէ թէրուղիղ է Արկադ՝ խօսի ընդ նմա խաղաղութիւն. քանզի էր պարտեալ հարեալ ի հօրէ նորա ի մեծէն Թէոդոսէ։ Յանձն առնու և Արկադ առնել զհաշտութիւն, առաւել յիւրոց զօրագլխացն... Վասն որոյ հաւանեալ՝ կամաւ յանձն առին բաժանել զՄիջագետս և զՀայոց աշխարհս կրկին սահմանադրութեամբ։ Վասն որոյ թողեալ Արշակայ զբուն թագաւորութիւն հարց իւրոց զԱյրարատ, և զամենայն մասն բաժնին Պարսից՝ գնաց տիրել արևմտեայ կողմանց աշխարհիս մերոյ, որ ի մասն ի բաժնին Յունաց. ոչ միայն մօրն աղագաւ, որ էր ի կայսերական քաղաքին, այլ լաւ համարեալ նուազ կողմանն տիրել՝ և ծառայել քրիստոնեայ թագաւորի, քան յոլովից իշխել՝ և մտանել ընդ լծով հեթանոսաց։ Գնացին զհետ նորա հանդերձ կանամբք և որդւովք և նախարարութիւնք որ ի բաժնին Շապհոյ, թողլով զիւրաքանչիւր արարս և զգիւղս և զդաստակերտս։ ...Շապհոյ՝ թագաւորեցոյց Հայոց ի վերայ բաժնի իւրոյ զԽոսրով ոմն ի նմին ազգէն Արշակունեաց։ Արշակ... թագաւորեալ ամենայն Հայոց ամս հինգ, և կիսոցն Հայոց ամս երկուս և կէս։ Եվ այնուհետև ոչ ևս կացուցին Յոյնք ի բաժնի իւրեանց թագաւոր, այլ առաջնորդէր նախարարաց կողմանցն այնոցիկ քաջն Գազաւոն. և աշխարհին իւրեանց մասինն կացուցին Յոյնք կոմէսս իշխանս»[16]։

Ինչպես տեսնում ենք, Խորենացին ևս Փարպեցու նման գիտէ, որ Արշակի հեռանալը երկրի արևմտյան մասը և Խոսրովի գահակալությունը արևելյան մասում պայմանավորված էին Հայաստանի բաժանումով։ Խորենացու մոտ Խոսրովի և Սահակ Պարթևի մասին եղած հաղորդումներով ստույգ ճշտվում է երկրի բաժանման տարեթիվը։ Պատմահայրը գրում է, որ Սահակ Պարթևը «կնցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի, սկսեալ յերրորդ ամէ վերջ-

---

14 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904, էջ 1, 8—12։ Այս հաղորդումը Ժ. Դուազը փորձում է հիմք ծառայեցնել ասելու, թե Խոսրովի գահակալությունը բաժանման ժամանակից ավելի ուշ եղավ։ Սակայն նա չի համոզում, քանի որ Արշակ III-ին նշում է որպես Արշակ IV, իսկ Խոսրովի գահակալությունը մոտեցնում է 387 թ. (J. Doise, նշվ. աշխ., էջ 276—277)։

15 Հմմտ. «Ապա Խոսրով ոմն ի նմին տոհմէ թագաւորացն Հայոց. առ սովաւ բաժանեցին զերկիրն Հայոց ընդ երկու՝ թագաւորն Յունաց և թագաւորն Պարսից, Պարսից կողմանն՝ Խոսրով թագաւորէ. մասինն Յունաց աշխարհին՝ Արշակ ոմն ի նմին տոհմէ ի թագաւորէ՝ հրամանաւ Յունաց թագաւորին» («Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», հրատ. Ա. Տէր-Միքելեան, Վաղարշապատ, 1893, էջ 267)։

16 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, Գ, խբ, խզ, էջ 310—311, 316)։

նոյ Խոսրովայ արքայի Հայոց մինչև ցսկիզբն ամին երկրորդի Յազկերտի[17] եղելոյ Պարսից թագաւորի, յելս ամսոյն Նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն» (Գ, կէ)։

Հ. Մանանդյանը, հիմնվելով Դյուլորիեի տոմարագիտական հաշվումների վրա, նշում է. «Ըստ Խորենացու՝ Սահակ Մեծը կաթողիկոս էր կարգվել Խոսրով Դ-ի թագավորության երրորդ տարում, այսինքն՝ 388 թ. և իր պաշտոնը վարել էր 51 տարի, ուրեմն՝ 388 թ. մինչև 439 թ.։ Ըստ իս այս բոլոր թվերը մենք կարող ենք ճշտված և հաստատուն համարել, որովհետև Դյուլորիեի տոմարագիտական ճշգրիտ հաշիվներից ես մեզ հայտնի է, որ Սահակ Մեծը վախճանվել է 439 թ. սեպտեմբերի 7-ին»[18]։

Հ. Մանանդյանը իրավացիորեն Խոսրովի գահակալության առաջին տարին է համարում 385 թ., քանի որ Հազկերտ II-ը գահ բարձրացավ, ինչպես և ընդունված է նորագույն գրականության մեջ, 439 թ.[19]։ Դրա հետ մեկտեղ Հ. Մանանդյանը նշում է, որ Խոսրովը «թագավորել է ոչ թե հինգ տարի, ինչպես մատնանշում է Խորենացին, այլ երեք տարի, ինչպես վկայում են Սեբեոսը, Ասողիկը և ուրիշները»[20]։

Եթե Խոսրովը գահ է բարձրացել 385 թ., նշանակում է, որ հենց այդ նույն ժամանակ Արշակ III-ը հեռացել էր Հայաստանի արևմտյան մասը և, հետևաբար, հայկական աղբյուրների հաղորդումները Հայաստանի բաժանման մասին վերաբերում են այս նույն թվականին[21]։

---

17 Այս արտահայտությունը Ստ. Մալխասյանցը թարգմանել է. «Մինչև պարսից Հազկերտ թագավորի առաջին տարվա սկիզբը» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 314)։ Ռուսերեն այն թարգմանված է. «до начала второго года воцарения царя персийского, Язкерта» («История Армении Моисея Хоренского», пер. Н. О. Эмина, М., 1893, էջ 211), որը համապատասխանում է հրատարակված բնագրի տարբերցվածին՝ «ցսկիզբն յերկրորդին (b երկրորդ) ամի Յազկերտի պարսից եղելոյ» (էջ 314, տող 14)։ Այս արտահայտությունը Փարպեցու մոտ հետևյալ ձևով է բերված. «Ի սկիզբան ամին երկրորդի Հազկերտի» (էջ 37)։ Պատմիչը վկայակոչում է Կորյունին, որի մոտ գրված է՝ «յառաջնումն ամի երկրորդ Հազկերտի», որը Մ. Արեղյանը թարգմանել է «Հազկերտի առաջին տարում» (Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 86, 87)։ Այս արտահայտությունը կա նաև Եղիշեի մոտ. «Մինչ յամն երկրորդ Հազկերտի» (Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե. Տեր-Մինասյան, 1957, էջ 6), որ թարգմանված է «до второго года Йазкерта» (Егише, О Вардане и войне армянской, Ереван, 1971, էջ 27)։ Պատմիչների մոտ եղած այս արտահայտությունն ավելի հստակ թարգմանված է Կորյունի ռուսերեն հրատարակությունում. «в первом году царствования Язкерта Второго» (Корюн, Житие Маштоца, перев. Ш. В. Смбатяна и К. А. Мелик-Оганджаняна, Ереван, 1962, էջ 117)։

18 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 244։ Տե՛ս նաև Ed. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859, էջ 135—136, ծան. 40։ Ինչպես ճիշտ հետևում է Հ. Աստուրյանի (էջ 315) և Մ. Օրմանյանի (§ 184) հետազոտություններից, այս Խոսրովը պետք է լինի Խոսրով III-ը, եթե նկատի ունենանք, որ Խոսրով I-ը Վաղարշ II-ի որդին էր, իսկ Խոսրով II-ը՝ Տրդատ III-ի։

19 В. Г. Луконин, Культура сасанидского Ирана, М., 1969, էջ 199։ Р. Фрай, Наследие Ирана, М., 1972, էջ 368։

20 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 244։

21 Ինչպես տեսնում ենք, հայկական աղբյուրները խոսում են 385 թ. բաժանման մասին, իսկ Ռ. Հարությունյանը օտար աղբյուրների հիման վրա կատարված հետազոտություններում նշված 387 թ. հիմք է ընդունել ասելու, որ Սեբեոսը («Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 19) և Ասողիկը («Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզե-

Ըստ Խորենացու Արշակ III-ը թագավորել էր ամբողջ Հայաստանի վրա հինգ, իսկ «կիսոցն Հայոց ամս երկուս և կէս»։

Բուզանդը Մանվել Մամիկոնյանի խնամակալության տակ Արշակի թագավորելու մասին գրում է. «Եւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհս, և զամենայն մեծամեծս և զնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր. և էր նա առաջնորդ և գլուխ նոցա. և վարէր զիւր իշխանութիւնն, և տայր հրաման աշխարհի փոխանակ թագաւորի. և ունէր զաշխարհ ի շինութեան։ Եւ զկինն Պապայ արքայի զՁարմանդուխտ տիկին, հանդերձ որդւոք Արշակունովք (Արշակ և Վաղարշակ—է. Դ.), առեալ զնոսա ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր ...Եւ ամենայն երկիրն Հայոց ի խաղաղութեան ընդ հովանեաւն Մանուէլի զամենայն աւուրս կենաց նորա, ամենայն մարդիկ երկրին Հայոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին և ըմպէին և ուրախ լինէին զայն ամս եւթն տէրութեանն Մանուէլի, մինչև ի բաժանումն երկրին Հայոց և քակտումն թագաւորութեանն»[22]։

Ինչպես տեսնում ենք, Խոսրովը Հայաստան է եկել 385 թ., ուրեմն այդ թվականին է Արշակը հեռացել երկրի արևմտյան մասը, որը տեղի էր ունեցել նույն թվականին Մանվել Մամիկոնյանի մահվանից հետո։ Այսպիսով, Հ. Մանանդյանը ճիշտ է նշում Մանվել Մամիկոնյանի իշխանության տարիները՝ 378—385 թթ.[23]։ Խորենացու հաղորդման մեջ Արշակի՝ ամբողջ Հայաստանի վրա հինգ տարի թագավորելու մասին տեղեկությունն արտացոլում է կամ այն իրողությունը, որ նա անմիջապես չի հաջորդել Վարազդատին, այլ մոտ երկու տարի անց, կամ էլ, որ ավելի հավանական է, եթե ընդունենք, որ Մանվել Մամիկոնյանի խնամակալության տակ Արշակի և Վաղարշակի թագավորության մասին Փավստոսի հաղորդումը վերաբերում է Վարազդատից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանին, ուրեմն Խորենացու մոտ «Ե»-ն հետագայում կատարված դրչական վրիպակ է «է»-ի փոխարեն։

Մանվել Մամիկոնյանի մահվան թիվը՝ 385, ապացուցվում է նաև այլ ձևով։ Ամմիանոսը հաղորդում է, որ Գրատիանոսի (Gratianus)[24] և Էկվիտուսի (Aequitus) հյուպատոսությանը (374 թ.) նախորդած տարում սպանվեց Պա-

---

բական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 73) Խոսրովի գահակալության երեք տարիների մասին խոսելիս նկատի ունեն նրա թագավորության պաշտոնական ճանաչումը բյուզանդացիների կողմից 387 թ. բաժանումից հետո («Բանահամակի» թվագրման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 63)։

22 Փ ա վ ս տ ո ս, էջ 206, 211։ Ստ. Մալխասյանցը Փավստոսի երկի ժամանակագրական սահմաններն է համարում 319 թ. և 384 թ. (Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմություն Հայոց, թարգմ., ներածությունը և ծան. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 5)։ Կ. Գյուտերբոկը և Վ. Զեյֆարթը Փավստոսի երկի ժամանակագրական վերջին սահմանն իրավացիորեն նշում են 385 թ., չնայած առաջինը գրում է, թե «Փավստոսը թեև բաժանման ժամանակը չի նշանակեր... և սակայն դեպքը կը դնե Մամիկոնյան Մանուելի 385-ին հանդիպած մահվանեն անմիջապես ետքը» (Կ. Գ յ ու տ ե ր բ ո կ, նշվ. աշխ., էջ 22), իսկ երկրորդը Արշակ II-ին շփոթում է Արշակ III-ի հետ, ինչպես նաև չի խոսում Հայաստանի բաժանման մասին (W. Seyfarth, նշվ. աշխ., էջ 470)։

23 Հ. Մանանդյանը գրում է շուրջ 384/5 թ. (նշվ. աշխ., էջ 230)։

24 Նա 367 թ. լինելով իր հոր՝ Վալենտինիանոս I-ի (364—375) գահակիցը, վերջինիս մահից հետո՝ 375 թ. վերջից կառավարեց Հռոմեական կայսրության արևմտյան մասում մինչև 383 թ. (W. Seyfarth, նշվ. տշխ., էջ 422)։

պը[25]. Պատմիչի շարադրանքից երևում է, որ այդ տեղի էր ունեցել 373 թ. վերջին։ Վարազդատը նրան հաջորդել է 374 թ., և քանի որ Խորենացին նրա թագավորության տարիները չորսն է համարում (Գ, խ). ուրեմն, իրոք, ինչպես նշված է գրականության մեջ (Մ. Օրմանյան, Հ. Մանանդյան), նա 378 թ. է հեռացել Հայաստանից։

Խորենացին հաղորդում է, որ Վարազդատի երկրորդ տարվանից Զավենը եպիսկոպոսապետեց չորս տարի, որին հաջորդեց Ասպուրակեսը, գահակալելով հինգ տարի (Գ, խ—խա)։ Հնարավոր է, որ այստեղ ևս «Ն»-ի գրչական վրիպակ լինի «Է»-ի փոխարեն, ուրեմն այս դեպքում կստացվի, որ Ասպուրակեսը աթոռակալել է 380—387 թթ.։ Թերևս Խորենացու մի հաղորդումից, ուր ասված է, որ Ասպուրակեսի վախճանվելուց հետո Խոսրովը նրան հաջորդ նշանակեց Սահակին (Գ, խթ), երևում է, որ նրանց միջև ընդմիջումը երկար չի եղել։ Այլ դեպքում կստացվի, թե Ասպուրակեսը եպիսկոպոսապետել է հինգ տարի (մինչև 385 թ.), որը քիչ հավանական է։

Մ. Օրմանյանը Ներսես կաթողիկոսի և Պապ թագավորի մահվան միջև ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների տևողությունը մոտ մեկ տարի է համարում, ուստի և Ներսեսի մահը դնում է 373 թ., իսկ Պապինը՝ 374 թ. (§ 155)։ Բայց քանի որ, ինչպես երևում է Ամմիանոսի հաղորդումից, Պապը սպանվել է 373 թ.[26], ուստի, նույն տրամաբանությամբ, Ներսեսի մահը պետք է տեղի ունեցած լիներ 372 թ.։

Մ. Օրմանյանը առաջարկում է Զավենի կաթողիկոսության առաջին տարվա մասին Խորենացու տեղեկությունը ուղղել «յերրորդ ամի Վարազդատայ» «երկրորդ»-ի (376 թ.) փոխարեն, կամ համարել «փոքրիկ տարբերություն»։ Դրանով Շահակի կաթողիկոսության վերջին տարին Մ. Օրմանյանը համարում է 377 թ., որը, ըստ նրա, Զավենի առաջին տարին է, ուստի և Ասպուրակեսի եպիսկոպոսապետության տարիները նշում է 381—386 թթ. (§ 166, 174)։ Այնինչ Շահակի կաթողիկոսության տարիներն են 372—376 թթ., Զավենինը՝ 376—380 թթ., իսկ Ասպուրակեսինը՝ 380—385 (կամ 387) թթ.։ Խորենացին վերջինիս եպիսկոպոսապետության սկիզբը նշում է Արշակի (Արշակ III) երկրորդ տարին (Գ, խա)։ Ուրեմն այստեղից ևս երևում է, որ Արշակը Մանվելի խնամակալության տակ սկսել է թագավորել 378 թ., իսկ վերջինս էլ, իրոք, կառավարել է 378—385 թթ.։ Մ. Օրմանյանը, ճիշտ նշելով Մանվելի կառավարման սկիզբը՝ 378 թ. (§ 172), նրա մահը դնում է 384 թ., որը, կարծում ենք, չի կապվում Արշակ III-ի երկրի արևմտյան մասը հեռանալու և Խոսրով III-ի Հայաստան գալու տարեթվի հետ։

Այսպիսով, Հայաստանի բաժանման մասին հայկական աղբյուրներում եղած հաղորդումները վերաբերում են 385 թ.։ Ուրեմն, իրոք կարելի է ենթադրել, որ մինչ այդ՝ 384 թ. բանակցությունների ժամանակ քննարկվել է Հայաստանը երկու մասի բաժանելու հարցը[27]։

Առաջին քայլը եղավ երկիրը երկու մասի բաժանելը՝ երկու թագավորներով։ Քանի որ Հռոմեական կայսրության գերիշխանության տակ գտնվող փորը

---

[25] Ammiani Marcellini rerum gestarum libri qui supersunt, with an English transl. by I. C. Rolf, London, 1958, vol. III, XXX. 1—3:

[26] Ammian Marc., էջ 295—313։

[27] Հ. Ասատուրյան, նշվ. աշխ., էջ 318։

մասը ռազմատնտեսական ուժեղ հիմքեր չուներ և, բացի այդ, տարիներ շարունակ դրա տարբեր հատվածները՝ գտնվելով կայսրության տիրապետության տակ, կորցրել էին իրենց քաղաքական դեմքը, ուստի Արշակ III-ի մահից հետո (387 թ. կեսերը)[28] այնտեղ թագավոր այլևս չնշանակվեց։ Իսկ Հայաստանի՝ պարսկական տիրապետության տակ անցած մեծագույն մասը, ուր մինչև 388 թ. շարունակեց թագավորել Խոսրով III-ը, չնայած բոլոր արհավիրքներին, դեռևս շարունակում էր պահպանել իր հզորությունը, նույնիսկ այնքան, որ Խոսրով III-ը, այնուհետև նաև միաժամանակ Վռամշապուհը, ինչպես հաղորդում է պատմահայրը, թագավորում էին երկու մասերի վրա, հարկ վճարելով թե՛ կայսրին, թե՛ պարսից արքային (Գ, խթ, ծա)։ Մ. Օրմանյանը բավական մանրամասն քննել է Խորենացու այս հաղորդումը և որոշակի եզրակացություններ հանգել (§ 184—185), իսկ Բ. Հարությունյանը գրում է, որ Խորենացու այդ հաղորդումը «ցայսօր ոչ միայն չի արժանացել ուսումնասիրողների ուշադրության պատշաճ չափով, այլև քննադատվել է անտեղի»։ Բ. Հարությունյանը ենթադրություն է անում, թե սրանց առնչությամբ Արկադիոսի հիշատակությունը վկայություն է այն բանի, որ իր հոր՝ Թեոդոս Մեծի կենդանության օրոք նա զբաղվում էր արևելյան խնդիրներով «և չի բացառվում, ինչպես հայտնում է Պատմահայրը, որ հենց նա էլ վավերացրել է Մեծ Հայքի 387 թ. բաժանումը»[29]։ Նախ. Խորենացու հաղորդումը, ինչպես տեսանք, վերաբերում է 385 թ., իսկ Արկադիոսի մասին Խորենացու վկայության կապակցությամբ դեռևս ժամանակին Կ. Գյուտերբոկը կարծիք էր հայտնել, թե դա կարելի է բացատրել նրանով, որ 383 թ. սկսած նա իր հոր դահակիցն էր և մասնավորապես պետության արևելյան կիսաբաժնի վրա էր իշխել[30]։

Ինչպես նշում է Մ. Օրմանյանը, կայսրը Խոսրով III-ին, այնուհետև Վռամշապուհին միաժամանակ հանձնելով Հայաստանի նաև արևմտյան մասը, հույս ուներ մնացածն էլ իր կողմը գրավել (§ 184—185)։ Այս տեսակետից պերճախոս են Խորենացու աշխատության հետևյալ տողերը. «Խոսրով ...խօսեցաւ ընդ Արկադեայ, զի լուծեալ զհաշտութիւնն ընդ Շապհոյ՝ օգնեսցէ նմա զօրու, և սա դարձուսցէ ի նա զբոլոր աշխարհս» (Գ, ծ)։

Խոսրով III-ը պետք է կարճ ժամանակ թագավորեր Հայաստանի երկու մասերի վրա, քանի որ Արշակի մահվան և Հայաստանից իր հեռացման միջև ընդամենը մեկ տարի էր ընկած։ Այն, որ Խոսրովը հեռացել է Հայաստանից 388 թ.՝ Շապուհ III-ի օրոք, երևում է թե՛ Խորենացու և թե՛ Փարպեցու հաղորդումներից։ Խորենացին գրում է. «Շապուհ, ի հրապուրելոյ զուշակութեան նահապետացս մերոց՝ նոյն հետայն առաքէ զորդի իւր զԱրտաշիր զօրու մեծաւ ի Հայս։ Եւ ի հրաժարել Արկադեայ ի կուսակցելոյն Խոսրովայ, և ոչ զոք յօտար ազգաց գտեալ ի սատարութիւն, անկարացեալ ընդդիմանալ կամ խուսափել ի նմանէ՝ չոգաւ առ նա։ Եւ Արտաշրի ընկեցեալ զնա ի տէրութենէն, փոխանակ կացուցանելով զՎռամշապուհ զեղբայր նորին, ոչ զմեծն Սահակ և ոչ զոք ի նախարարացն կարգելոցն ի Խոսրովայ վրդովեաց ի պատուոյ իւրաքանչիւր. նա և հրամայեաց ևս ընդ Յոյնս զնոյն կարգ ունել։ Եւ թողեալ զունդ ստուար,

28 Հ. Մանանդյանը Արշակ III-ի թագավորության տարիները նշում է 378—389 թթ. (նշվ. աշխ., էջ 228)։

29 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 64։

30 Կ. Գյուտերբոկ, նշվ. աշխ., էջ 24։ Տե՛ս նաև՝ Ю. Кулаковский, История Византии, т. I, Киев, 1913, էջ 8։

ինքն ի Տիսբոն փութայր հասանել, ի Ծերութենէ հօրն ակն ածեալ, ընդ իւր ունելով զԽոսրով՝ դնել յԱնուշն կոչեցեալ բերդին» (Գ, ծ)։

Մ. Օրմանյանը, համադրելով մեր պատմիչների (և հատկապես Խորենացու) հաղորդումները, Շապուհ III-ի օրոք կատարված դեպքերը տարաղատել է Շապուհ II-ի ժամանակաշրջանից (§ 169, 172)։ Հ. Աստուրյանը, նույնպես քննելով Խորենացու հաղորդումները, Շապուհ III-ին, որի ժամանակ, ինչպես նշում է նա, գործել է Խոսրով III-ը, տարբերել է Շապուհ II-ից[31]։

Խորենացին, նշելով, որ Խոսրովին Հայաստանից հեռացրեց Արտաշիրը[32], որն այնուհետև Պարսկաստանի թագավոր դարձավ, ամենայն հավանականությամբ նկատի ունի ոչ թե Վռամ IV Կրմանին, այլ հենց Արտաշիր II-ին։ Բայց քանի որ Արտաշիր II-ը այս դեպքերից հինգ տարի առաջ արդեն մահացել էր, ուրեմն պատմահայրը, նույնացնելով Շապուհ II-ին և Շապուհ III-ին, մեկ այլ անձնավորության հետ կապված գործողությունները վերագրել է Արտաշիրին[33]։ Խոսրովին Հայաստանից հեռացնողը կարող էր Շապուհ III-ի զորավարներից մեկը լինել, որը կատարում էր արքայի հրամանը։ Այս իրադարձությունների մասին Փարպեցին գրում է, որ պարսից արքա Շապուհը «հրաման տայր վաղվաղակի հրովարտակաւ զԽոսրով ի դուռն կոչել. և նորա չզգացեալ զբանսարկութիւն իշխանացն Հայոց՝ վաղվաղակի որպէս առ իւր իշխան և բարեկամ ի դուռն հասանէր։ Եւ Շապհոյ թշնամանեալ զնա պատուհասէր, այլ թերևս և վասն յօժարութեամբ մերժելոյ զնա ի թագաւորութենէն, և ոչ յանդիման կամեցեալ առնել զնա չարախօսացն՝ վաղվաղակի մերժեալ ընկենոյր զԽոսրով յիշխանութենէն իւրոյ թագաւորութեանն, և ուխտէր՝ այլ ևս ոչ տեսանել զաշխարհն Հայոց, անդէն կալեալ յաշխարհին Պարսից պահէր։ Իսկ իբրև մերժեալ լինէր Խոսրով ի թագաւորութենէն՝ խնդրէին Հայք ընդ Շապուհ՝ այլ թագաւոր իւրեանց. և նա հաւանեալ թագաւորեցուցանէր նոցա զՎռամշապուհ զեղբայր նորին Խոսրովու, յազգէն Արշակունեաց. և թագաւորեցուցեալ զՎռամշապուհ՝ արձակէր ի Հայս» (էջ 12—13)։ Այստեղից նույնպես պարզ երևում է, որ Խոսրովի հեռացվելը և Վռամշապուհի գահակալումը եղել է Շապուհ III-ի օրոք։

---

31 Հ. Աստուրյան, նշվ. աշխ., էջ 315։ Հմմտ. Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 108—109։

32 Բ. Հարությունյանը նշում է, որ հետազոտողների զգալի մասը իրավացիորեն գտնում է, թե Արտաշիրը ոչ թե Շապուհ Երկարակյացի որդին էր, այլ նրա հորեղբայրը (նշվ. աշխ., էջ 62, ծան. 26)։ Սակայն Վ. Գ. Լուկոնինը նույնիսկ դժվարանում է Արտաշիրին Շապուհ II-ի եղբայր համարել, քանի որ գտնում է, որ վերջինիս 70-ամյա թագավորությունից հետո հազիվ թե նրա եղբայրը գահ բարձրանար (В. Г. Луконин, նշվ. աշխ., էջ 147)։

Նույն տրամաբանությամբ ուղղակի անհնար է Արտաշիր II-ին Շապուհի հորեղբայր համարել։ Վ. Գ. Լուկոնինը ավելի հավանական է համարում Ե. Հեցֆելդի կարծիքը, որ Արտաշիր II-ը ծագում էր Սասանյանների կողային ճյուղից (E. Herzfeld, Am Tor von Asien, Berlin, 1920, էջ 69, նույնի Paikuli, Berlin, 1924, էջ 50, В. Г. Луконин նույն տեղում)։ Այնուհետև Բ. Հարությունյանը գալիս է այն եզրակացության, որ Խոսրովին Հայաստանից հեռացնելը կատարվել է Վռամ IV Կրմանի օրոք և նույնիսկ ենթադրում է, որ Վռամի մյուս անունն էր Արտաշիր (նշվ. աշխ., էջ 65)։

33 Խորենացին չի նույնացնում Արտաշիրին և Վռամ IV-ին (Գ, ծա)։ Վերջինս չէր կարող Շապուհ III-ի կենդանության ժամանակ Հայաստան գալ և Խոսրովին ձերբակալել, քանի որ մինչ Իրանի գահի վրա հաստատվելը Վռամ IV-ը իշխում էր նախկին քուշանական թագավորությունում, ինչպես ցույց է տրված գրականության մեջ (В. Г. Луконин, նշվ. աշխ., էջ 150, հմմտ. A. Christensen, L'Iran sous les Sasanides, Copenhague, 1944, էջ 253)։

Խոսրով III-ի հեռացվելը, ինչպես տեսնում ենք, նույնպես կապված էր Հայաստանի բաժանվածության հետ։ Խոսրով III-ը ձգտել էր ինչ գնով էլ լիներ վերամիավորել Հայաստանի երկու մասերը, սակայն նրա այդ ջանքերը բախվեցին Շապուհ III-ի կատաղի դիմադրությանը, ընդհուպ մինչև Խոսրովի արտաքսվելը երկրից և կալանավորվելը։

Դժվարելի է եզրակացնել, որ Հայաստանի բաժանումը Հռոմեական կայսրության և սասանյան Պարսկաստանի միջև տեղի է ունեցել 385 թ.[34], իսկ հետևյալ տարիներին կողմերը կարող է նորից անդրադարձած լինեին հարցին[35]՝ քաղաքական սարբեր իրավիճակներից ելնելով։ Հայաստանի IV դարի 80-ական թթ. պատմությունն այն սահմանագիծն էր, երբ Հռոմեական կայսրության և պարթևական Իրանի, այնուհետև Սասանյանների դարեր տևած նվաճողական քաղաքականությունը թևակոխեց իր հաջորդ փուլը՝ ֆեոդալական դարաշրջանում դոներ բացելով նոր նվաճումների և բռնությունների համար։

ГОД РАЗДЕЛА АРМЕНИИ—387 ИЛИ 385?

Кандидат историч. наук Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

В условиях осуществления захватнической политики Восточной Римской империи и сасанидской Персии Армения в середине 80-х гг. IV в. оказалась перед фактом раздела. В научной литературе высказывались различные мнения о годе раздела (384, 387, 389); датировка его 387 г. является доминирующей. Основным доводом сторонников этой датировки является приурочение византийского посольства к персидскому двору к 387 г. Однако возглавленное Споракием с участием Стилихона византийское посольство вело переговоры, на которых должен был стоять и вопрос о разделе Армении, не позднее 384 г. Из сообщений Фавстоса Бузанда, Мовсеса Хоренаци и Лазара Парпеци следует, что в результате раздела царствовавший до этого над всей Арменией Аршак III (378—385) был вынужден удалиться в западную часть страны, где он процарствовал еще два с половиной года (385—387), а царем восточной части Шапур III (383—388) назначил Хосрова III (385—388). Сообщения Мовсеса Хоренаци создают солидную хронологическую базу

---

34 Ինչպես նշում է Ն. Ադոնցը, Մոմզենը գտնում է, որ չնայած Պոլեմիոս Սիլվիոսը V դարի հեղինակ է, սակայն նրա կողմից կազմված Laterculus-ի բովանդակությունն ավելի վաղ ժամանակաշրջանի է վերաբերում՝ ոչ ուշ քան 386 թ.։ Այնտեղ հիշատակվում են Armenia minor և Armenia maior երկրամասերը, որոնք մտնում էին Pontica դիոցեզի մեջ։ Գիտնականը նշում է նաև, որ Armenia maior շարունակում է անվանվել հռոմեացիներին անցած Հայաստանի այն մասը, որը, ըստ երևույթին, պաշտոնապես կոչվում էր Armenia interior (ներքին Հայք՝ նույն Բարձր Հայքը. տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана (СПб, 1908), Ереван, 1972, էջ 28—29, 86)։ Արդյո՞ք 385 թ. տեղի ունեցած բաժանման հետևանք չպետք է լինի Laterculus-ում արված այդ հիշատակությունը։

35 Հետաքրքիր է Հ. Աստուրյանի նշումը, որ երկրորդական կետերի կարգավորումը տևեց մինչև 389 թ. (նշվ. աշխ., էջ 319։ Հմմտ. Լեո, Հայոց Պատմութիւն, հատ. II, Թիֆլիս, 1917, էջ 669, J. Doise, նշվ. աշխ., էջ 277)։

для определения года раздела. Согласно Хоренаци, с третьего года царствования Хосрова католикосом Армении был Саак Партев, патриаршествовавший 51 год и скончавшийся в начале царствования Йездигерда II (439—457). На основании этих данных в историографии выяснено, что Саак Партев умер в 439 г., а начало царствования Хосрова относится к 385 г.

Так как армянские источники считают временем раздела год ухода Аршака III в отошедшую к империи западную часть Армении и воцарения Хосрова III в восточной части, оставшейся под контролем Сасанидов, из сказанного следует, что раздел Армении произошел в 385 г., после переговоров, имевших место в 384 г.